

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Վ. Ռազլոզ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավար
Գ. Պողոսյան	«Գործարար շահերի պաշտպանության ցանց» ՀԿ-ի համակարգող
Ն. Մախյան	«Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ» ՀԿ-ի գործադիր տնօրեն
Կ. Մարտիրոսյան	Երևանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն

Մասնակիցներ՝

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Հ. Բերբերյան	ՀՀ վարչապետի ռեֆերենտ
Ա. Գրիգորյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Տ. Սուքիասյան	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Երևանի գրասենյակի ներկայացուցիչ
Տ. Հարությունյան	ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի գործադիր տնօրեն

Վ. Զիրուխյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի գործարար միջավայրի բարելավման վարչության պետ
Ա. Եզանյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՓՄՁ զարգացման վարչության պետ
Ե. Հովհաննիսյան	«Հայաստանի տրանսպորտային առաքողների միություն» ՀԿ-ի նախագահ
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական առաջատար մասնագետ
Պ. Մադրաշյան	Հասարակայնության հետ կապերի մասնագետ

Ողջույնի խոսք

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, նախքան օրակարգային հարցերի քննարկմանն անդրադառնալը, որպես ի գիտություն հայտնեց, որ մշակվել է օրենսդրական փոփոխությունների մի փաթեթ, որի հիմնական նպատակը ՓՄՁ-ների համար գործարար միջավայրի հնարավորինս բարելավումն է, ինչպես նաև հարկային բեռի տեղափոխումն այնպիսի ոլորտներ, որտեղ առկա են ավելի մեծ եկամուտներ: Այդ կապակցությամբ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն առանձնացրեց հետևյալ փոփոխությունները՝

1) եկամտահարկի սանդղակն այսուհետ պետք է կազմվի պրոգրեսիվ սկզբունքով, այն ֆիզիկական անձանց համար, ովքեր ստանում են 2 միլիոն դրամից ավելի եկամուտ, կսահմանվի 25 տոկոս հարկման դրույքաչափ:

2) միջազգային կանոններին համապատասխան մրցակցային հավասար պայմաններ ապահովելու նպատակով սպիրտային խմիչքներ ներմուծողների ու տեղական արտադրողների, մասնավորապես էլիտար խմիչքների համար սահմանվելու են հարկման այլ դրույքաչափեր: Օրինակ՝ օղու համար սահմանվելու է արժեքային դրույքաչափի 50 տոկոսով ավելին՝ ներքին նիշը թողնելով անփոփոխ (1 լիտրի համար՝ 500 դրամ): Այս փոփոխության արդյունքում ակնկալվում է 2.0 մլրդ դրամով ավելի հարկերի հավաքագրում:

3) կներդրվի նոր հարկատեսակ, որը կկոչվի «շքեղության հարկ»: Այսինքն, առաջին անգամ թանկարժեք մեքենաների (90.0 հազ. ԱՄՆ-ի դոլար և ավելի արժեք ունեցող) համար կսահմանվի մաքսային արժեքի նկատմամբ 25 տոկոսի չափով դրույքաչափ:

4) շահումով խաղերի, խաղատների, վիճակախաղերի կազմակերպման գծով սահմանված հաստատագրված վճարների չափերը կավելանան 50 տոկոսով: Այս

փոփոխության արդյունքում ևս ակնկալվում է 2.0 մլրդ դրամով ավելի հարկերի հավաքագրում.

5) կրնդլայնվեն արտոնագրային վճարների դաշտում գործունեության տեսակների շրջանակները, որը հիմնականում վերաբերելու է ՓՄՁ-ներին: Այդ ոլորտներն են հանրային սնունդը, հյուրանոցային տնտեսությունները, թեթև մարդաստար մեքենաներով ուղևորափոխադրումները, վարսավիրանոցները, ավտոտեխնապասարկման կայանները, ավտոկանգառները, բիլիարդ խաղերի կազմակերպումը.

6) այլ պարտավորությունների մարման գծով հարկային գերավճարների հաշվանցման (առանց ուսումնասիրության) հնարավորության շեմի բարձրացումը մինչև 10.0 մլն դրամ: Նման արտոնությունն առաջին հերթին վերաբերելու է ՓՄՁ-ներին: Ընդ որում, պետության կողմից գերավճարների հետվերադարձման պարագայում վճարվող տուգանքները չեն համարվի եկամուտ և ըստ այդմ չեն հանդիսանա հարկման առարկա.

7) կվերանա նաև ՀՀ տարածքում վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցամատյանի վարման պարտադիր պահանջը և էապես կպարզեցվի ձեռնարկատիրական գործունեության առարկաների և դրանց գների գրանցամատյանի վարման ընթացակարգը.

8) խոշոր, մեծածավալ ներկրում իրականացնող ձեռնարկատիրությունների համար կխստացվեն փաստաթղթաշրջանառության գծով սահմանված պահանջները և կիրառվող պատժամիջոցները.

9) հանքաքարի, գունավոր և սև մետաղների ջարդոնների ու փայտանյութի արտահանման գծով կսահմանվեն պարտադիր վճարներ, խթանելու համար ՀՀ-ում դրանց վերամշակումը.

10) բանկային ոլորտում կատարվող փոփոխությունը կառնչվի բանկերի կողմից հիմնական միջոցների ինքնուրույնաբար վերագնահատման արտոնության վերացմանը.

11) կխստացվեն նաև առանց հաշվարկային ձևակերպմամբ ապրանքների տեղափոխման նկատմամբ սահմանված պատասխանատվության միջոցները: Հիմնականում այն կվերաբերի ամսական 15.0 մլն դրամից ավելի իրացման շրջանառություն ունեցող խոշոր հարկ վճարողներին.

12) կարգելվի խոշոր գործարքների գծով կանխիկ (առանց փաստաթղթային ձևակերպումների) վճարումների իրականացումը:

Այսպիսով, մշակված օրենսդրական փաթեթը ենթադրում է ՓՄՁ-ների գործարար միջավայրի բարելավում, հարկային վարչարարության (ստուգումների) կրճատում, ինչպես

նաև արտոնագրային կամ հաստատագրված վճարների դաշտերում հաշվետվությունների թվի կրճատում:

1. Կատարված աշխատանքների վերաբերյալ ՓՄՁ խորհրդի քարտուղարության հաշվետվություն

(Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց` հանձնարարել ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանին`

1) ՓՄՁ զարգացման խորհրդի քարտուղարությունում համապատասխան մասնագետների մասնակցությամբ քննարկման առարկա դարձնել գերփոքր և փոքր ձեռնարկատերերի համար հաշվապահական հաշվառման, հարկային հաշվետվությունների կազմման ծառայությունների մատուցման սակագների նվազեցման, հաշվետվությունների ձևերի պարզեցման հնարավորության հարցերը և արդյունքները զեկուցել հաջորդ նիստին.

2) ևս մեկ անգամ քննարկել ՓՄՁ զարգացման խորհրդի մեկ ընդհանուր կայք-էջում տեղադրվելիք տեղեկատվական նյութերի ընտրության հարցը և ըստ այդմ`

ա. տեղադրել ՁՄՁ-ներին մտահոգող 10 կարևորագույն հարցերն իրենց պատասխաններով,

բ. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և (կամ) ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կայք-էջերում տեղադրել մնացած տեղեկատվությունը:

2. Գործարար համայնքի կողմից բարձրացվող նոր հարցեր

(Կ. Մինասյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց`

1) հանձնարարել ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին`

ա. սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել գրասենյակային գործունեություն իրականացնելու նպատակով բնակարանի վարձակալման գծով բնակարանի նպատակային նշանակության փոփոխման պահանջի վերացման մասին համապատասխան առաջարկություն,

բ. մշակել և սահմանված կարգով շրջանառել հավաքական բեռի փոխադրման կանոնակարգի նախագիծը,

գ. քննարկել ՀՀ կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 27-ի N 887 որոշման վերանայման նպատակահարմարության հարցը և ըստ անհրաժեշտության ներկայացնել համապատասխան առաջարկություն,

դ. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար Ա. Գրիգորյանի հետ համատեղ`

- ևս մեկ անգամ քննարկել և ըստ այդմ լրամշակել ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 638-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը` հստակ նշելով գործարար համայնքի ներկայացուցիչների` խորհրդի կազմում ռոտացիոն կարգով փոփոխվող անդամների տոկոսային հարաբերակցությունը,

- ՓՄՁ զարգացման խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել առաջարկություն` գործարար համայնքի ներկայացուցիչների` ՓՄՁ զարգացման խորհրդի կազմում ընդգրկվելու գծով չափորոշիչների սահմանման վերաբերյալ:

2) ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 638-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի վերջնական լրամշակումից հետո անդրադառնալ ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի գործադիր տնօրեն Տիգրան Հարությունյանին ՓՄՁ զարգացման խորհրդի կազմում որպես դիտորդ և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանին ՓՄՁ զարգացման խորհրդի անդամ ընդգրկելու հարցերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ